Փիլիսոփաների սրճարան 3

Քննարկման նյութեր

Դեկտեմբերի 18, 2025 թ.

Ո՞րն է լավ կյանքը: Ու՞մ կյանքն է լավ ընթանում:
Ի՞նչն է անձի կյանքը դարձնում լավը:

Ներաշխարհի վիճակի տեսությունների համաձայն՝ կյանքը լավը կամ վատն է դառնում շնորհիվ անհատի ներաշխարհի ինչ-ինչ վիճակների: Օրինակ, ըստ հեդոնիզմի՝ (օրինակ, ըստ Ջերոմի Բենտամի) անձի կյանքը լավն է, այն լավ է ընթանում, եթե անձը վայելում է մեծ քանակությամբ հաճույք և նվազագույն քանակությամբ ցավ:

1. Որո՞նք են ներաշխարհի այն վիճակները, որոնք ունեն ինքնին արժեք (լինի դա դրական թե բացասական).
ա) Հաճույք և ցավ
բ) Իմաստալից կյանքի զգացում և անիմաստ կյանքի զգացում
գ) Հետաքրքրվածություն և ձանձրույթ
դ) և այլն:

2. Ներաշխարհի քանի՞ (տիպի) վիճակ կա, որ ունի ինքնին արժեք:
Ըստ մոնիզմի՝ կա ներաշխարհի՝ ինքնին արժեք ունեցող միայն մեկ (տիպի) վիճակ: Ըստ պլյուրալիզմի՝ այսպիսի բազմաթիվ վիճակներ կան:

Ցանկությունների բավարարման տեսությունների համաձայն՝ կյանքը լավ է ընթանում, եթե բավարարվում են անձի ցանկությունները:

1. Պարզ է, որ ցանկությունների բավարարումը որոշակի կապ ունի բարեկեցության հետ, քանի որ, օրինակ, ցանկությունների բավարարումը որոշակի հաճույք է պատճառում:

2. Բայց արդյո՞ք բոլոր ցանկությունների բավարարումն է բարձրացնում անձի բարեկեցության մակարդակը կամ անձի կյանքը դարձնում ավելի լավը:

3. Ցանկությունների բավարարման շատ տեսություններ կան:
ա) Ըստ որոշ տեսությունների՝ կարևոր են բոլոր ցանկությունները, ըստ մյուսների՝ միայն արժեքավոր ցանկությունները: Բայց ո՞ր ցանկություններն են արժեքավոր:
բ) Ժամանակի ընթացքում ցանկությունների փոփոխություն
գ) Տվյալ պահին առկա, բայց անհամատեղելի ցանկություններ
դ) Թանկ և էժան ցանկություններ և այլն:

Օբյեկտիվիստական տեսությունների համաձայն՝ անձի կյանքը լավ է ընթանում, եթե անձը հասու է ինչ-ինչ օբյեկտիվ բարիքների՝ անկախ նրանից, անձը վայելում է դրանք, ուրախ է դրանք ունենալու համար, թե ոչ:

1. Որո՞նք են այս օբյեկտիվ բարիքները: Որպես այդպիսիք սովորաբար նշվում են առողջությունը, գիտելիքը, իրական ընկերությունը և այլն:
   Սրանք իսկապե՞ս օբյեկտիվորեն ինքնին արժեքավոր են, թե՞ մեզ այդպիսին են թվում, քանի որ դրանք սովորաբար մեզ հաճույք են պատճառում կամ օգնում են բավարարել մեր ցանկությունները: Ինչպե՞ս կարող ենք այս հարցին պատասխանել:

2. Իսկ կարո՞ղ ենք բացահայտել այդ օբյեկտիվորեն ինքնին արժեքավոր իրողությունների ամբողջական ցանկը:

3. Արդյո՞ք այդ օբյեկտիվ բարիքներն անձի բարեկեցության մակարդակը բարձրացնում են անգամ այն դեպքում, երբ անձը դրանցից հաճույք չի զգում, դրանցով չի բավարարում իր ցանկությունները և այլն:

Կարողության տեսությունների համաձայն՝ անձի բարեկեցությունը կախված է իր համար արժեքավոր կյանք, գործունեություն ընտրելու նրա իրական հնարավորության չափից:

1. Կարողության տեսությունը փորձում է համադրել ներաշխարհի վիճակի, ցանկությունների բավարարման և օբյեկտիվիստական տեսությունների դրական կողմերը՝ խուսափելով դրանց բացասական կողմերից:

2. Մարդու կյանքը լավ է գնում, լավն է, եթե նա իրական հնարավորություն ունի կատարելու իր համար արժեքավոր բազմաթիվ գործողություններ: Որքան մեծ է այն գործողությունների ցանկը, որոնք տվյալ անձի համար (և իսկապես) արժեքավոր են և որոնք նա իրապես կարող է կատարել, այդքան ավելի բարեկեցիկ է նա:

Քննարկման հարցեր

Ի վերջո, ո՞րն է լավ կյանքը: Ինչպիսի՞ կյանքի պետք է ձգտել:
Բաժանվեք չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ պետք է պատասխանի ստորև ներկայացված հարցերից մեկին:

1. Ինչո՞վ են ներաշխարհի վիճակները կարևոր: Որո՞նք են ներաշխարհի ամենաարժեքավոր վիճակները: Ո՞րն է ներաշխարհի վիճակի տեսությունների օգտին ամենաուժեղ փաստարկը:
2. Ինչո՞վ է ցանկությունների բավարարումը կարևոր: Ո՞ր ցանկություններն են ամենակարևորը: Ո՞րն է ցանկությունների բավարարման տեսության օգտին ամենաուժեղ փաստարկը:
3. Կա՞ն արդյոք օբյեկտիվ բարիքներ: Այդ օբյեկտիվ բարիքների ի՞նչ օրինակներ գիտեք: Ո՞րն է օբյեկտիվ բարիքների տեսության օգտին ամենաուժեղ փաստարկը:
4. Արդյո՞ք անձի բարեկեցությունն իսկապես կախված է նրա կարողությունից՝ տարբեր արժեքավոր գործողություններ կատարելու իրական հնարավորությունից: Իսկ որո՞նք են այդ արժեքավոր գործողությունները: